# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

20 մայիսի 2026թ. թիվ 332-Ա

Լ.ԳԵՆՋՅԱՆԻՆ ԱՐՁԱԿՈՒՐԴԻ ՄԻ ՄԱՍԸ
ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն Հայաստանի Հանրապետության Աշխատանքային օրենսգրքի 156-րդ, 163-րդ հոդվածների, 164-րդ հոդվածի 2-րդ մասի, ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի հուլիսի 25-ի թիվ 1392-Ն որոշման թիվ 3 հավելվածով հաստատված «Հայաստանի Հանրապետության պետական հանրակրթական ուսումնական հաստատություն» պետական ոչ առևտրային կազմակերպության օրինակելի կանոնադրության» 60-րդ կետով և հաշվի առնելով Լ.Գենջյանի դիմումը՝

Ո ր ո շ ո ւ մ եմ.

1. «Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձորի Ս.Զորյանի անվան թիվ 22 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի վարչատնտեսական մասի համակարգող Լուսինե Գենջյանին տրամադրել 2026-2027 թվականների աշխատանքային տարվա ամենամյա երկարացված արձակուրդի մի մասը ս/թ մայիսի 25-ից մինչև հունիսի 8-ը ներառյալ՝ 10 աշխատանքային օր:

2. Լ.Գենջյանի արձակուրդում գտնվելու ընթացքում «Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձորի Ս.Զորյանի անվան թիվ 22 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի վարչատնտեսական մասի համակարգողի պարտականությունները կատարող նշանակել «Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձորի Ս.Զորյանի անվան թիվ 22 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի տնօրենի ժամանակավոր պաշտոնակատար Ժաննա Ավագյանին:

3. Լ.Գենջյանին աշխատանքի մեջ համարել 2026 թվականի հունիսի 9-ից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏԻ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ

Ստորագրող
ԱՐՍԵՆ ՂԱՐԻԲՅԱՆ
2414880046

2026-05-20 11:53:01 GMT+4
Հավաստված է ԷԿԵՆԳ-ի կողմից

ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ՝ Ա.ՂԱՐԻԲՅԱՆ

2026թ. մայիսի 20
ք.Վանաձոր